ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/7» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀԲԱՏԱՊ ՔԱՋ ՄՐՑՈՒՅԹ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ(ՀԲՄ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 06 հունիսի 2018թ.
ժամը 12[00]

Մասնակցում էին

Գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան(ԳԱՊ),
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի պետ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Տ. Հարոյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Ս. Նիկոլյան,
ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչության պարենային ծառայության պետ, գնդապետ Ա. Մարգարյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան

Գնումները համակարգող (հանձնաժողովի քարտուղար)՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀՇ 2-րդ դասի առաջատար ծառայող Գ. Վարդանյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/7» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Վարդանյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/7» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/7» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Գ. Վարդանյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «պարենային միջոցների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/7» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/Հ	Մասնակցի անվանում
1	<<Էրիզ>> ՍՊԸ /կոնսորցիում «Մագիա» ՓԲԸ
2	«Սիսականի Հասկ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ *0*:

2 .« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/7» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Գ. Վարդանյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:
2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/7» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ՝

- «Էրիզ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված N 1-ի /հրատապ բաց մրցույթին մասնակցելու դիմում/, որի մեջ նշված է «...«Էրիզ» ՍՊԸ -ն և «Մագիա» ՓԲԸ-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/7» ծածկագրով հայտարարված հրատապ բաց մրցույթի **1-5**-րդ չափաբաժնին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ», այնինչ, մասնակցի կողմից հայտ է ներկայացվել միայն **1**-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների համար:
- «Սիսականի Հասկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված N 1-ի /հրատապ բաց մրցույթին մասնակցելու դիմում/ մեջ նշված է «...«Սիսականի Հասկ» ՍՊԸ -ը հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/7» ծածկագրով հայտարարված հրատապ բաց մրցույթի **32**-րդ չափաբաժնին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ», այնինչ, մասնակցի կողմից հայտ է ներկայացվել միայն **2**-րդ չափաբաժնի համար:

11.06.2018թ.-ին, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը, մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և, սահմանված կարգով առաջարկել մասնակիցներին ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը, հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:Մասնակիցների կողմից սահմանված ժամկետում անհամապատասխանությունները շտկվել են:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Ֆուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Գ. Վարդանյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել 2 մասնակից.

Հ/Հ	Ապրանքի անվանում	Չ/Մ	Քանակ	Նախահաշվ. գումար	1-ին տեղ զբաղեցնող մասնակից			Մրցույթին մասնակցող այլ կազմակերպությունների			
					անվանում	գինը		Հ/Հ	անվանումները	Գումար	
						առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով			առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով
1	Այուր ցորենի 1-ին տեսակի /Երևանի տարածաշրջան /ք. Երևան և հարակից մարզեր//	կգ	1266544	231577920	<<Էրիզ>> ՍՊԸ /կոնսորցիում «Մագիա» ՓԲԸ	192981600	231577920	1			
2	Այուր ցորենի 1-ին տեսակի /Այունիքի տարածաշրջան/	կգ	545000	98100000	«Սիսականի Հասկ» ՍՊԸ	67035000	80442000	2			
3	Այուր ցորենի 1-ին տեսակի /Լոռու և Շիրակի տարածաշրջաններ/	կգ	200000	36000000	<<Էրիզ>> ՍՊԸ /կոնսորցիում «Մագիա» ՓԲԸ	30000000	36000000	3			
4	Այուր ցորենի 1-ին տեսակի /Տավուշի տարածաշրջան/	կգ	365000	65700000	<<Էրիզ>> ՍՊԸ /կոնսորցիում «Մագիա» ՓԲԸ	54750000	65700000	4		-	
5	Այուր ցորենի 1-ին տեսակի /Գեղարքունիքի տարածաշրջան/	կգ	475000	85500000	<<Էրիզ>> ՍՊԸ /կոնսորցիում «Մագիա» ՓԲԸ	71250000	85500000	5			

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/;

3.3 Քանի որ «այուրի» գնումն իրականացնելու համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/7» ծածկագրով ընթացակարգի 1, 2, 3, 4 և 5 չափաբաժինների մասով /յուրաքանչյուր չափաբաժին դիտարկվում է որպես առանձին ընթացակարգ/ գնային առաջարկ է ներկայացրել մեկ մասնակից, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից, հիմք ընդունելով սույն ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.6 կետի 1-ին ենթակետը, գների նվազեցման նպատակով 19.06.2018թ. ժամը 12^{00}-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպվել են բանակցություններ, որոնց ներկայացել է միայն <<Էրիզ>> ՍՊԸ-ի ներկայացուցիչը: Գնահատող հանձնաժողովի հետ բանակցությունների ժամանակ <<Էրիզ>> ՍՊԸ-ի կողմից առաջարկվեց քննարկել գնման ենթակա ապրանքների դիմաց վճարման պայմանները, մասնավորապես, կանխավճարի տրամադրման ժամկետների փոփոխության հնարավորության հետ կապված: Գնային առաջարկի նվազեցման շուրջ ձեռք բերվեց համաձայնություն և 20.06.2018թ. <<Էրիզ>> ՍՊԸ-ն ներկայացրեց նոր գնային առաջարկ՝ առաջարկելով 1-ին չափաբաժնի համար՝ 222 572 112 ՀՀ դրամ, 3-րդ չափաբաժնի համար՝ 34 600 000 ՀՀ դրամ, 4-րդ չափաբաժնի համար՝ 63 145 000 ՀՀ դրամ, 5-րդ չափաբաժնի համար՝ 82 175 000 ՀՀ դրամ, իսկ վճարման պայմանների փոփոխության հնարավորության շուրջ, առարկայական քննարկման արդյունքում, գնահատող հանձնաժողովը 22.06.2018թ. որոշեց դրանք թողել անփոփոխ: Հանձնաժողովը հայտերի վերանայման ընթացքում արձանագրեց. որ «Սիսականի Հասկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված N 1-ի /հրատապ բաց մրցույթին մասնակցելու դիմում/ մեջ նշված չէ ՀՎՀՀ-ն /հարկ վճարողի հաշվառման համարը/, ինչը պարտադիր է, քանի որ ներառված է Հավելված N 1-ի մեջ: 22.06.2018թ.-ին, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը, ևս մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և, սահմանված կարգով առաջարկել մասնակցին ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը, հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:Մասնակցի կողմից սահմանված ժամկետում անհամապատասխանությունը շտկվել է:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/7» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Գ. Վարդանյան)

4.1 26.06.2018թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/7» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգում ըստ չափաբաժինների՝ 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել <<Էրիզ>> ՍՊԸ-ն /կոնսորցիում «Մագիա» ՓԲԸ/, 2-րդ չափաբաժնով՝ «Սիսականի Հասկ» ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/7» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Գ. Վարդանյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ. Վարդանյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/7» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից ամփոփման վերջնաժամկետի օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11⁰⁰-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) — Վ. Գասպարյան

Գնահատող — Ա. Մարգարյան

Գնահատող — Ա. Մաղաքյան

Գնահատող — Տ. Հարոյան

Գնահատող — Ս. Նիկոլյան

Գնումները համակարգող՝ — Գ. Վարդանյան